



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

14 մարտի 2013թ. թիվ 108

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԿՈՄԻՏԵ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՆԵՐՔԻՆ
ԱՌԻԴԻՏԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 5-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1794-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի թիվ 165-Ն հրամանի 3-րդ գլխի պահանջները.

Կ ա Ր Գ ա Դ Ր ՈՒ Մ ԵՄ.

1. Սահմանել ներքին աուդիտի կոմիտե՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի համակարգին աջակցելու նպատակով:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Սահմանել, որ մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի քարտուղար է հանդիսանում մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետը՝ առանց քվեարկելու իրավունքի:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ Հ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2013թ. մարտի 14
ք.Վանաձոր

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2013թ. մարտի 14-ի
թիվ 108 կարգադրության

Կ Ա Ձ Մ
Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի

- Ա.Նալբանդյան - կոմիտեի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետ
- Լ.Բերոյան - մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ,
կոմիտեի քարտուղար
- Կոմիտեի անդամներ.
- Ա.Դարբինյան - ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ
- Ա.Մանուկյան - մարզպետարանի աշխատակազմի ղեկավար /խորհրդակցական
ձայնի իրավունքով/
- Ա.Սահակյան - մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ